Հաստատված է
Երևանի պետական համալսարանի
գիտական խորհրդի 22.03.07թ.
թիվ -2--- նիստի որոշմամբ

ԵՊՀ գիտ. նախագահ, ռեկտոր
---------- Ա.Հ. Սիմոնյան
«-------» ---------- 2007թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Երևանի պետական համալսարանի մշակույթի կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակներն են համալսարանում գործող մշակութային կառույցների աշխատանքների աջակցումը, ԵՊՀ շրջանակներում անցկացվող մշակութային միջոցառումների համակարգումը, ուսանողության շրջանում գեղարվեստական ճաշակի և որակի բարձրացումը:

1.2 Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կենտրոնն ունի ԵՊՀ խորհրդանշանով ձևաթուղթ (պաշտոնաթուղթ):

1.4 Կենտրոնը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.5 Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

2. Խնդիրներն ու գործառույթները

2.1 Կենտրոնի խնդիրներն են.

2.1.1 ԵՊՀ ուսանողների մշակութային ունակությունների զարգացման խթանումը:

2.1.2 Միջբուհական մշակութային կապերի ստեղծումը:

2.1.3 Ուսանողության շրջանում տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերումը:

2.1.4 Ներհամալսարանական, արտահամալսարանական և միջբուհական մշակութային մրցույթների, փառատոնների անցկացումը, համերգների և ներկայացումների կազմակերպումը:

2.1.5 Մշակութային դասախոսությունների, սեմինարների, կլոր սեղանների կազմակերպումը:

2.1.6 Ֆիլմերի և ներկայացումների դիտումների և քննարկումների միջոցով ուսանողության մեջ գեղարվեստական կողմնորոշումների զարգացումը:

2.2 Կենտրոնի գործառույթներն են.

2.2.1 Օժանդակում է ԵՊՀ ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների նախաձեռնած մշակութային միջոցառումներին:

2.2.2 Կազմակերպում և իրականացնում է մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ փառատոններ, ուսանողների հանդիպումներ մշակութային գործիչների հետ, կլոր սեղան - քննարկումներ, ԵՊՀ-ի և բուհերի մշակութային կյանքի զարգացման միտումների և օրինաչափությունների վերաբերյալ մշակութային դասախոսություններ, սեմինարներ, ֆիլմերի, ներկայացումների դիտումներ, մշակութային այլ միջոցառումներ:

2.2.3 ԵՊՀ մշակութային կյանքին ուսանողության ակտիվ մասնակցությունն ապահովելու, շնորհալի ուսանողներին հայտնաբերելու նպատակով ստեղծում է ակումբներ, խմբեր (Ուրախների և հնարամիտների ակումբ (ՈՒՀԱ), Պարի խումբ, «Համալսարանական» թատրոն - ստուդիա և այլն), կազմակերպում է մրցույթներ, սահմանում է դրանց գործունեության կարգը:

2.2.4 Կենտրոնի խնդիրներն իրականացնելու նպատակով ԵՊՀ ուսանողներից կազմում է կամավորների խմբեր, համակարգում դրանց գործունեությունը:

2.2.5 ԵՊՀ դասախոսների և ուսանողների շրջանում անցկացնում է ԵՊՀ մշակութային կյանքին վերաբերող սոցիոլոգիական հարցումներ, որոնց արդյունքում ԵՊՀ ռեկտորատին, գիտական խորհրդին ներկայացնում է համապատասխան զեկույցներ և առաջարկություններ:

3. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

3.1 Կենտրոնի աշխատանքների համակարգումը ԵՊՀ ռեկտորի համապատասխան հրամանով վերապահվում է ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին:

3.2 Կենտրոնն անմիջականորեն ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը: Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում է ԵՊՀ ռեկտորը:

3.3 Կենտրոնի տնօրենը

3.3.1 կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը, համաձայն ԵՊՀ կանոնադրության 14-րդ հոդվածի՝ մասնակցում է ԵՊՀ ռեկտորատի աշխատանքներին:

3.3.2 ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում Կենտրոնի և այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունները,

3.3.3 ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր,

3.3.4 Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության՝ ԵՊՀ ռեկտորին կամ կենտրոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորին ներկայացնել համապատասխան զեկույց և առաջարկություններ Կենտրոնի գործունեությանը առնչվող ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ,

3.3.5 պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և նրա առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար: